# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Շենգավիթ վարչական շրջանի Տարոնցի h1 բազմաբնակարան շենքի թեք տանիքի հիմնանորոգման» աշխատանքային նախագիծը կատարվել է՝ ըստ պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, տեղում օբյեկտի մասնագիտական ուսումնասիրության , չափագրական գծագրերի, համապատասխան Հայաստանի Հանրապետությանում գործող շինարարական նորմերին և կանոններին:

Բազմաբնակարան շենք ունի ուղղանկյունաձև հատակագիծ 52.0x18.4 մ առանցքային չափեր:

Ըստ նախագծման առաջադրանքի.

Շենքի տանիքի ուսումնասիրելուց հետո որոշվեց ամբողջովին փոխել ծածկի թիթեղը: Նոր ծածկը իրականցնել ցինկապատ պրոֆիլավորված /КП-25-0,55/ և հարթ d=0.55մմ թիթեղներով:

Փոխվում են նաև ջրհորդանները, ջրհոսները, ջրահավաքները, ձագարները, ջրահեռացման խողովակները և ծածկի պատուհաների թիթեղները: Գոյություն ունեցող տանիքի ցինկապատը և արտաքին հակահրդեհային աստիճանները գտնվում են բարվոք վիճակում, անհրաժեշտ է այն ներկել համապատասխան մետաղի ներկով 2 շերտ: Տանիքի փայտյա էլեմենտները ՝ ծպեղները,կանգնակները ,կավարածը ,ծպեղնաթեքան, մարդակը, քիվահանը, պատուհանը գտնվում են բարվոք վիճակում:

Թիթեղների քանդման ժամանակ անհրաժեշտ է նորոգել կամ փոխել վնասված փայտե էլեմենտները: Նախքան նոր ծածկի իրականցնելը պետք է պատել հականեխիչ և հակահրդեհային լուծույթով: Տանիք քառալանջ է, ջրահեռացումը կազմակերպված, իրականցվում է 140մմ տրամագծով ցինկապատ թիթեղից խողովակներից, ջրհորդանները պատրաստվում են 0,55մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից:

Շինարարության տեղանքը գտնվում է III սեյսմիկ գոտում:

| ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ | | |
|---|---|---|
| 1 | Իրավիճակային հատակագիծ Մ 1:2000 | ՃՇ-1 |
| 2 | Բացատրագիր , Անվանացանկ | ՃՇ-2 |
| 3 | Տանիքի չափագրություն | ՃՇ-3 |
| 4 | Տանիքի հատակագիծ | ՃՇ-4 |
| 5 | Տանիքի կոնստրուկտիվ սխեմա | ՃՇ-5 |
| 6 | Տանիքի կտրվածքներ | ՃՇ-6 |
| 7 | Տանիքի հանգույցներ | ՃՇ-7 |

Համաձայնեցված է՝

Շենգավիթ վարչական շրջանի

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Megametr | *Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Տարոնցի փող. h.1 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում* | | | *ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2016-1* | | |
| | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ | *ՓՈՒԼ* | *ԹԵՐԹ* | *ԹԵՐԹԵՐ* |
| *ՆԱԽԱԳԾԵՑ* | *Ա. ԴԱՎԹՅԱՆ* | | Բացատրագիր ,Անվանացանկ | *ԱՆ* | *ՃՇ-2* | *7* |
| | | | | *«ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ* | | |